ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է սկսվել արևմտահայության զանգվածային վերաբնակեցումը ռուսական տերությանն անցած տարածքներ:

1) 1829 թ.
2) 1833 թ.
3) 1831 թ.
4) 1830 թ.

2 Ե՞րբ են հայ–վրացական ուժերն ազատագրել Կարսը:

1) 1206 թ.
2) 1199 թ.
3) 1203 թ.
4) 1209 թ.

3 Ե՞րբ է Հայաստանում գործարկվել էլեկտրոնային արագացուցիչը:

1) 1976 թ.
2) 1957 թ.
3) 1967 թ.
4) 1959 թ.

4 Ե՞րբ է տեղի ունեցել Գում Գափուի ցույցը:

1) 1890 թ. հունիսին
2) 1895 թ. սեպտեմբերին
3) 1890 թ. հուլիսին
4) 1891 թ. հունիսին

5 Ե՞րբ է կնքվել Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը:

1) 278 թ.
2) 298 թ.
3) 295 թ.
4) 287 թ.

6 Ո՞ր թվականին է Կիրակոս Վիրապեցին ընտրվել ամենայն հայոց կաթողիկոս:

1) 1439 թ.
2) 1441 թ.
3) 1461 թ.
4) 1451 թ.

7 Երբվանի՞ց է հրատարակվում «Բազմավեպը»:

1) 1837 թ.
2) 1836 թ.
3) 1846 թ.
4) 1843 թ.

8 ԱՄՆ–ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար որոշումը հայ–թուրքական սահմանազծման վերաբերյալ հայտնի է դարձել՝

1) 1920 թ. նոյեմբերի 22–ին
2) 1920 թ. հունիսի 23–ին
3) 1920 թ. մայիսի 22–ին
4) 1920 թ. օգոստոսի 10–ին

9 Ո՞վ էր Հայաստանի առաջին հանրապետությունում Հանրային կրթության և արվեստի նախարարը:

1) Նիկոլ Աղբալյանը
2) Յու. Ղամբարյանը
3) Լևոն Շանթը
4) Գուրգեն Էդիլյանը

10 Ո՞ր պատմիչն է վկայել, որ Տիգրանակերտում եղել է թատրոն:

1) Տակիտոսը
2) Պլուտարքոսը
3) Պոլիբիոսը
4) Դիոն Կասիոսը

11 Ո՞ւմ զորաջոկատն է XIX դ. առաջին կեսի ռուս–թուրքական երկրորդ պատերազմի ընթացքում կռվել Կովկասյան ճակատի Երևան–Բայազետ ուղղությամբ:

1) Վ. Բեհբութովի
2) Վ. Մադաթովի
3) Ի. Պասկևիչի
4) Ա. Ճավճավաձեի

12 Հայկական դիվիզիաներից ո՞րն է առաջինը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մեկնել ռազմաճակատ:

1) 89–րդ
2) 408–րդ
3) 76–րդ
4) 390–րդ

13 **Ո՞վ է գլխավորել Բաքվի հայերի ինքնապաշտպանությունը հայ–թաթարական ընդհարումները սկսվելու ժամանակ։**

1) Արմեն Գարոն
2) Դրոն
3) Նիկոլ Դումանը
4) Համազասպը

14 **Ո՞վ էր Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի առաջին նախագահը։**

1) Սահակ Տեր-Գաբրիելյանը
2) Ալեքսանդր Մյասնիկյանը
3) Սարգիս Լուկաշինը
4) Սարգիս Կասյանը

15 **Ո՞վ է հայկական առաջին դատաստանագրքի ստեղծողը։**

1) Սմբատ Գունդստաբլը
2) Ներսես Շնորհալին
3) Դավիթ Ալավկաորդին
4) Մխիթար Գոշը

16 **Ի՞նչ լեզվով են գրված արտաշեսյան սահմանաքարերի արձանագրությունները։**

1) հայերեն
2) պարսկերեն
3) արամեերեն
4) լատիներեն

17 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը։**

«Ամեն ոք իր մասին է մտածում։ Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի։ Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար… մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»։

1) Թովմաս Նազարբեկյանը
2) Մովսես Սիլիկյանը
3) Ռուբեն Տեր–Մինասյանը
4) Արամ Մանուկյանը

18 **Ո՞ւմ է դիմել Անի քաղաքի բնակչությունը հետևյալ կոչով։**

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»։

1) Սարգիս Զաքարյանին
2) Աշոտ սպարապետին
3) Վահրամ Պահլավունուն
4) Սմբատ սպարապետին

19 **Արևմտահայ զորաբաժինը կյանքի կոչելու համար 1917 թ. ստեղծված գործադիր մարմինը կոչվել է՝**

1) Հայաստանի ապահովության խորհուրդ
2) Հայ զինվորական միություն
3) Հայոց ազգային խորհուրդ
4) Կովկասի գործերի արտակարգ կոմիսարիատ

20 **Միջնադարում գանձագին էին կոչվում՝**

1) հավատարմությամբ ծառայած նախարարներին թագավորի շնորհած հողերը
2) թագավորի կողմից վաճառքի հանված հողերը
3) առուվաճառքի ենթակա պետական հողերը
4) առուվաճառքի ենթակա մասնավոր հողերը

21 **Ինչի՞ հետևանք էին Իշպուինի արքայի առաջին խոշոր արտաքին հաջողությունները։**

1) քաղաքային կյանքի աշխուժացման
2) Ասորեստանի ցուցաբերած ռազմաքաղաքական օժանդակության
3) ռազմական բարեփոխումների
4) Բաբելոնի հետ կնքած դաշինքի

22 **Ի՞նչ նպատակով էր Արցախ ժամանել հայազգի Իվան Կարապետը։**

1) տեղեկացնելու Պետրոս I–ի Կասպիական արշավանքը սկսելու մասին
2) Սյունիքի և Արցախի ազատագրական ուժերին հաշտեցնելու համար
3) հայտնելու Նիկոյալ I–ի՝ հայ ազատագրական ուժերին զորական աջակցություն ցուցաբերելու վճռականությունը
4) հայերի ազատագրական զինված պայքարին ռուսական իշխանությունների օժանդակությունը հավաստելու համար

23 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. «Հանրապետություն» քաղաքական միավորման ձևավորումը
բ. ՀՀ եռաստիճան դատական համակարգի ձևավորումը
գ. ՀՀ–ի վարչատարածքային փոփոխությունների իրականացումը՝ մարզերի ստեղծումը
դ. նախկին խորհրդային հանրապետությունների հայտարարությունները Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին
ե. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը

1) դ, ե, ա, բ, գ
2) ե, դ, գ, ա, բ
3) դ, ե, գ, ա, բ
4) ե, դ, ա, գ, բ

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը։**

ա. Սասանյանների գահակալման սկիզբը Պարսկաստանում
բ. Կարակալլա կայսեր կողմից Հայոց արքայի ձերբակալումը
գ. Արտավազդ V-ի գահակալելը Մեծ Հայքում
դ. Վաղարշ II-ի զոհվելը
ե. Խոսրով II–ի գահակալելը Մեծ Հայքում
զ. Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը

1) գ
2) ա
3) դ
4) բ

25 **Հեղինակի անունը համապատասխանեցրե՛ք ստեղծագործությանը։**

1. «Հայոց պատմություն»	ա. Էվրիպիդես
2. «Ժամանակագրություն»	բ. Ամֆիկրատես Աթենացի
3. «Պատմություն»	գ. Ագաթանգեղոս
4. «Բաքոսուհիներ»	դ. Փիլոստրատոս
5. «Մեծ մարդկանց մասին»	ե. Հիպպոլիտիս
	զ. Սեբեոս

1) 1–գ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–բ
2) 1–գ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–դ
3) 1–գ, 2–դ, 3–զ, 4–բ, 5–ե
4) 1–զ, 2–դ, 3–գ, 4–ա, 5–բ

26 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Մականուն

1. Վարդգես
2. Փարամազ
3. Վարդան
4. Իշխան
5. Կոմս

Անուն–ազգանուն

ա. Հովսեփ Արղության	դ. Հակոբ Կոտոյան
բ. Վահան Փափազյան	ե. Հովհաննես Սերենկյուլյան
գ. Սարգիս Մեհրաբյան	զ. Մատթեոս Սարգսյան

1) 1–ե, 2–զ, 3–գ, 4–ա, 5–բ
2) 1–դ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–բ
3) 1–ե, 2–բ, 3–գ, 4–ա, 5–զ
4) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–զ

27 **Ո՞ր շարքի բոլոր նախարարներն են Ավարայրի ճակատամարտում եղել զորագնդերի հրամանատարներ:**

1) Գագիկ Արծրունի, Թաթուլ Վանանդեցի, Վարդան Մամիկոնյան, Խորեն Խորխոռունի
2) Արշավիր Արշարունի, Վարդան Մամիկոնյան, Գաղիշո Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի
3) Խորեն Խորխոռունի, Վարդան Մամիկոնյան, Գագիկ Արծրունի, Համազասպ Մամիկոնյան
4) Վարդան Մամիկոնյան, Թաթուլ Վանանդեցի, Խորեն Խորխոռունի, Ներշապուհ Արծրունի

28 **Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում «Նաիրի» երկրանունը:**

1) Ք. ա. XI դարում
2) Ք. ա. XII դարում
3) Ք. ա. XIII դարում
4) Ք. ա. XIV դարում

29 **Ե՞րբ է տպագրվել առաջին հայերեն գիրքը:**

1) 1547 թ.
2) 1566 թ.
3) 1521 թ.
4) 1512 թ.

30 **Ո՞վ էր Արատտայի հովանավոր աստվածը:**

1) Հայոս
2) Արամ
3) Հայ(ա)
4) Հայկ

31 **Վասակ սպարապետը որտե՞ղ է վերաթաղել պարսիկներից ազատած հայ Արշակունի թագավորների աճյունները:**

1) Անիում
2) Աղձքում
3) Անգեղում
4) Կուաշում

32 **Ովքե՞ր են երդվել հետևյալ խոսքերով:**

«Այսուհետև իմ բարձը լինելու են Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը»:

1) Վանի ապստամբության մասնակիցները
2) ֆիդայիները
3) Զեյթունի ապստամբության մասնակիցները
4) ՀՅԴ անդամները

33 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:**

Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասաց. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

1) Գրիգոր Հարությունյանը
2) Յակով Զարոբյանը
3) Ասքանազ Մռավյանը
4) Աղասի Խանջյանը

34 **Ո՞ւմ մասին է խոսքը մեջբերված հատվածում:**

«. . . [Նա] Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու և Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջև եղած հակադրությունը»:

1) Գլինկայի
2) Նիկոլսկու
3) Բրոսեի
4) Հյուբշմանի

35 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ:**

1. Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին այլախոհներ:
2. Երևանում 1988-1990 թթ. տեղի ունեցած հանրահավաքների վայր Թատերական հրապարակն այժմ կոչվում է Ազատության հրապարակ:
3. 1989 թ. դեկտեմբերի 1–ին Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված որոշումը վերնագրված էր «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»:
4. 1992 թ. գարնանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում խորհրդային բանակի հետ համագործակցությամբ ադրբեջանական իշխանությունների իրականացրած գործողությունը կոչվում էր «Կոլցո»՝ «Օղակ»:
5. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
6. Ազգային միացյալ կուսակցության 1970 թ. ձևավորված ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որդեգրեց մի ռազմավարություն, որը կոչվում էր «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով»:

36 **Ընտրե՛ք ճիշտ բացատրությունները։**

1. «Սահմանապահ կուսակալ»–ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
2. Արարատյան կամ Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
3. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր առանձին նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
4. Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
5. «Արքունի հացատար»–ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:

37 **Ի՞նչ պատճառներով 1896 թ. ինքնապաշտպանական կռիվների մասնակից վանեցիներն ընդունեցին անգլիական հյուպատոսի միջնորդությունը։**

1. փախստականների ներհոսքի հետևանքով առաջացած անմխիթար վիճակի
2. հայկական ուժերի շրջանում սկիզբ առած բախումների
3. հայերի կոտորածը անհապաղ դադարեցնելու կառավարական հրամանը հաշվի առնելու
4. թուրքական իշխանությունների՝ զինված վանեցիների անարգել անցումը Կիլիկիա ապահովելու խոստման
5. զինամթերքի պակասի

38 **Թվարկվածներից որո՞նք Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի անկախության վերականգնման համար արտաքին նախադրյալ չեն հանդիսացել։**

1. Խալիֆայության ներքաղաքական իրավիճակը կայուն չէր, մեծ ծավալ էին ստացել ժողովրդական ազատագրական ընդվզումները և գահակալական կռիվները:
2. Արևելքում խալիֆայությունը կործանիչ պարտություն էր կրել Ատրպատականից, և կազմալուծվող խալիֆայությունը հարկադրված էր դիմելու զիջումների քաղաքականության:
3. Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա դարավոր հակառակորդ Պարսկաստանը, որն ամեն կերպ աջակցում էր խալիֆայությունից առանձնանալ ձգտող կենտրոնախույս ուժերին:
4. Գերազանցապես վարձկաններից կազմված արաբական բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին և երբեմն անհնազանդություն էր ցուցաբերում:
5. Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում բավականին ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից:

39 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները։**

1. Համեմատական լեզվաբանության շնորհիվ պարզ դարձավ, որ հայերը, հույներն ու պարսիկները միակ ժողովուրդներն են, որոնց ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում։
2. Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելուց հետո Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդակաները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն։
3. «Հայկ և Բել» առասպելում արտացոլվել է Հայաստանի և Իրանի միջև դարավոր հակամարտությունը։
4. Գավգամելայի ճակատամարտի արդյունքում Դարեհ III–ը գերեվարվեց և Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց։
5. Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, դարձավ Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան։

40 **Պնդումներից որո՞նք են համապատասխանում ՀՀ-ի և ՌՍԴԽՀ-ի միջև 1920 թ. ամռանը կնքված համաձայնագրի բովանդակությանը։**

1. ՌՍԴԽՀ-ն Հայաստանին տրամադրելու էր 2,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ։
2. ՀՀ-ն Ռուսաստանին հնարավորություն էր տալիս օգտվելու իր երկաթուղիներից՝ զորքեր և այլ ռազմական փոխադրումներ Իրան հասցնելու համար։
3. ՀՀ-ն համաձայնվում էր, որ ռուսական զորքերը Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես զբաղեցնեն՝ մինչև հարցի վերջնական լուծումը։
4. Ռուսաստանը ստիպելու էր, որ Թուրքիան հրաժարվի Բաթումի պայմանագրից։
5. Ռուսաստանը ճանաչում էր ՀՀ անկախությունը։

41 **Ո՞ր իրադարձությունն է խախտել տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը։**

1. մոնղոլ պատվիրակների սպանությունը անեցիների կողմից
2. Կարսի և Դվինի գրավումը մոնղոլների կողմից
3. Շամքոր քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
4. Կարինի գրավումը մոնղոլների կողմից
5. Չմանկատուկի ճակատամարտը

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Ներսիսյան դպրոցի հիմնադրումը
2. Լազարյան ճեմարանի բացումը
3. Շուշիի թեմական դպրոցի բացումը
4. Աղաբաբյան դպրոցի հիմնադրումը
5. Երևանի թեմական դպրոցի բացումը

43 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Ա. Լոզանի կոնֆերանս
Բ. Ազգերի լիգա
Գ. Հայկական համաշխարհային կոնգրես
Դ. Լոնդոնի կոնֆերանս
Ե. Անկարայում Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքված պայմանագիր

1. համաշխարհային հանրությանը 1915–1923 թթ. Թուրքիայի իրականացրած քաղաքականությանը ծանոթացնելու նպատակով համազգային կենտրոնական մարմնի ստեղծումը
2. հայերի համար «ազգային օջախ» ստեղծելու մասին որոշման ընդունումը
3. Կիլիկիային ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ հայկական պատվիրակությունների պահանջի ներկայացումը
4. Թուրքիայում հայերի «ազգային օջախ» ստեղծելու առաջարկի մերժումը Թուրքիայի արտգործնախարար Իսմեթ փաշայի կողմից
5. հայկական հողային պահանջների վերաբերյալ փաստաթղթի պատրաստումը
6. Կիլիկիայի հանձնումը Թուրքիային

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Արշակունիների արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցրե՛ք իրենց գահակալման շրջանի սպարապետների անուններին:**

Ա. Վաչե Մամիկոնյան
Բ. Վասակ Մամիկոնյան
Գ. Արտավազդ Մանդակունի
Դ. Մուշեղ Մամիկոնյան
Ե. Մանվել Մամիկոնյան

1. Վռամշապուհ
2. Տրդատ III
3. Արշակ III
4. Արշակ II
5. Խոսրով III Կոտակ
6. Պապ

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Հնչակյաններն իրենց ծրագրում որպես մոտակա նպատակ սահմանել էին մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը:
2. Ընդհանուր առաջին ժողովը «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը վերանվանել է «Հայ հեղափոխական դաշնակցություն»:
3. Արմենականները Հայկական հարցի լուծումը կապում էին Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:
4. Հայկական մարզը ստեղծվել է Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո:
5. Կ. Պոլսի հայ համայնքի՝ մեծամասամբ հայ ամիրաներից կազմված Ազգային ժողովը և Կովկասի փոխարքայությունը ստեղծվել են նույն թվականին:
6. «Ազատության ավետաբեր» թերթը գաղտնի կերպով տպագրել է «Հայրենասերների միություն» կազմակերպությունը:

46 **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

ա. 1906 թ. օգոստոսին Էջմիածնում Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը հայտնի է պատգամավորական Կենտրոնական ժողով անունով:
բ. 1916 թ. մարտ–օգոստոս ամիսներին հայկական կամավորական ութ ջոկատներից վերակազմակերպված վեց կազմավորումները կոչվում էին հայկական հրաձգային գնդեր:
գ. 1917 թ. մարտի 9–ին Ժամանակավոր կառավարության կողմից Անդրկովկասում ստեղծած գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան սեյմ:
դ. Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկոմիսարիատ:
ե. Լոնդոնում դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի միջև կնքված համաձայնագրով հիմնականում հայերից ստեղծված զորամիավորը կոչվում էր «Արևելյան լեգեոն» (Հայկական լեգեոն):
զ. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսար Ավերյանովին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:
է. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում միջազգային հարաբերությունների կիզակետում հայտնված հիմնախնդիրը հայտնի է Հայկական հարց անունով:

1) գ, դ, է
2) բ, դ, ե
3) ա, դ, զ
4) բ, գ, ե

47 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

ա. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
բ. Դարեհ III Կոդոմանոսի, նախքան պարսկական գահին բարձրանալը, Հայաստանում ղբաղեցրած պաշտոնը կոչվում էր սատրապ:
գ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
դ. Փարպեցին Արտաշես I–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
ե. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Անահիտը եղել է նաև ռազմի դիցուհի:
զ. Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:
է. Դարեհ II–ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

1) բ, գ, զ
2) ա, բ, զ
3) դ, ե, է
4) ա, դ, ե

48 **Թվարկվածներից որո՞նք գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանք չեն։**

ա. 1930–ական թթ. վերջին Հայաստանում գոյություն ուներ 1000 կոլտնտեսություն։
բ. Մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության։
գ. ԽՍՀՄ–ը դարձավ հզոր արդյունաբերական երկիր։
դ. Գյուղացիության մի մասը համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը։
ե. Ծավալվեց նէպը, և զարգացան ապրանքադրամական, շուկայական հարաբերությունները։
զ. Ձևավորվեց գյուղական մտավորականության խավ։
է. Նյութական շահագրգռվածության սկզբունքի վրա հիմնված սոցիալիստական տնտեսաձևի առկայության պայմաններում բոլոր կոլտնտեսություններն արձանագրեցին տնտեսական բարձր ցուցանիշներ։

1) բ, զ, է
2) ա, բ, զ
3) դ, ե, զ
4) գ, ե, է

49 **Ընտրե՛ք երեք պատճառ, որոնք նպաստեցին Հուստինիանոս I կայսեր օրոք Արևմտյան Հայաստանում հայ նախարարների իշխանության թուլացմանը։**

ա. հայերի հակաբյուզանդական հաճախակի ելույթները
բ. ժառանգության իրավունքի մասին հատուկ օրենքի ընդունումը
գ. հայ նախարարների միջև փոխադարձ թշնամանքը
դ. իշխանության հանձնումը բյուզանդական զինվորականությանը
ե. նոր վարչական բաժանումները
զ. հաճախ կրկնվող պարսկա–բյուզանդական պատերազմները
է. Հուստինիանոսի կողմից նոր աշխարհագիր անցկացնելը

1) բ, ե, է
2) ա, զ, է
3) բ, դ, ե
4) ա, զ, է

50 **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Երևանի գրավումը շահ Աբասի կողմից
բ. Բաղդադի գրավումը թուրքերի կողմից և թուրք–պարսկական պատերազմների ավարտը
գ. շահ Աբասի հարձակումը և Թավրիզի գրավումը
դ. շահ Աբասի հրամանով հայ բնակչության տեղահանության սկիզբը
ե. շահ Աբասի գահակալության ավարտը
զ. Նախիջևանի գրավումը շահ Աբասի կողմից
է. Կասրե-Շիրինի պայմանագրի կնքումը
ը. շահ Աբասի կողմից Այսրկովկասի ու Ատրպատականի զիջումը օսմանցիներին
թ. շահ Աբասի մուտքը Ջուղա
ժ. Ամասիայի հաշտության կնքումը Սեֆյան և Օսմանյան տերությունների միջև

1) զ
2) դ
3) ա
4) թ

51 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը։**

ա. թուրքերի կողմից Հալիձորի պաշարումը
բ. Եղվարդի ճակատամարտը
գ. Չավնդուրի ճակատամարտը
դ. Մխիթար սպարապետի և տեր Ավետիսի հրամանատարությամբ Մեղրիի ազատագրումը
ե. Դավիթ բեկի առաջին հաղթական մարտը
զ. պարսկական շահի կողմից Դավիթ բեկի իշխանության ճանաչումը
է. Դավիթ բեկի կողմից մելիք Բաղրին պատկանող Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը

1) է
2) զ
3) ե
4) գ

52 **Արտաշեյան տիրակալներից ո՞վ է գահակալել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Արտավազդ II
բ. Տիգրան III
գ. Տիգրան IV
դ. Տիգրան II
ե. Արտավազդ I
զ. Արտաշես II
է. Արտաշես I
ը. Տիգրան IV և Էրատո
թ. Արտավազդ III
ժ. Տիգրան I

1) ա
2) զ
3) բ
4) թ

53 **Քաղաքները կառուցող արքաների անունները համապատասխանեցրե՛ք քաղաքների անվանումներին։**

1. Տիգրանակերտ
2. Զարիշատ
3. Մծուրք
4. Էրեբունի
5. Մենուախինիլի
6. Տուշպա (Վան)
7. Վաղարշապատ
8. Բագարան
9. Սամոսատ

ա. Սանատրուկ
բ. Արգիշտի I
գ. Մենուա
դ. Արտաշես I
ե. Տիգրան Մեծ
զ. Շամ
է. Երվանդ IV
ը. Տիգրան I
թ. Վաղարշ I
ժ. Սարդուրի I

1) 1–ը, 2–է, 3–դ, 4–բ, 5–գ, 6–ա, 7–ժ, 8–զ, 9–ե
2) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ, 5–գ, 6–ժ, 7–թ, 8–է, 9–զ
3) 1–ե, 2–ա, 3–դ, 4–գ, 5–ժ, 6–բ, 7–թ, 8–ը, 9–զ
4) 1–ե, 2–թ, 3–ը, 4–բ, 5–գ, 6–ժ, 7–է, 8–զ, 9–դ

54 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները:**

ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:
բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I–ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

1) ա, բ, է
2) գ, դ, զ
3) ա, զ, է
4) բ, դ, ե

55 **Տրվածներից որո՞նք չեն վերաբերում Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման նախագծին:**

ա. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը հռչակել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով
բ. Հայաստանում 20 տարի ժամկետով տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան
դ. Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն
ե. Հայոց թագավորին ընտրել ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև օծել Էջմիածնում
զ. Պետերբուրգում ունենալ Հայաստանի կառավարության դեսպան
է. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին

1) ա, գ, է
2) բ, դ, զ
3) բ, ե, զ
4) գ, ե, է

56 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա. Երբ Սմբատ Բագրատունու 2000–անոց այրուձին գտնվում էր Արձնի գյուղի մոտ, արաբական 5000–անոց պատժիչ ջոկատը հասավ նրանց։
բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Արածանին։
գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախեցին թշնամուն, միայն 280 արաբ զինվոր փախավ ու թաքնվեց եկեղեցում։
դ. Արաբների տիրապետության ժամանակ հայ հոգևորականությունը հարկատու չէր։
ե. Վարդանակերտի մոտ պարտված արաբները փախուստի դիմեցին, Երասխի սառույցը ջարդվեց, և նրանցից շատերը խեղդվեցին։
զ. VIII դ. սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը։
է. Հերթ ոստիկանի աշխարհագրով հարկահանությունը խիստ ծանրացավ։

1) ե, զ, է
2) բ, գ, է
3) բ, գ, դ
4) ա, ե, զ

57 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Ղեկավար	*Ինքնապաշտպանության վայր*
1. Բաղդիկ Սիմոնյան	ա. Մուսա լեռ (Սուետիա)
2. Հայկակ Կոսոյան	բ. Վան՝ Այգեստան
3. Հակոբ Կոտոյան	գ. Վան՝ Քաղաքամեջ
4. Ղուկաս Տեռվլեթյան	դ. Ուրֆա
5. Տիգրան Անդրեասյան	ե. Շապին Կարահիսար
6. Մկրտիչ Յոթնեղբայրյան	զ. Թաղ
	է. Մուշ

1) 1–է, 2–բ, 3–գ, 4–ե, 5–ա, 6–զ
2) 1–զ, 2–գ, 3–է, 4–ե, 5–ա, 6–դ
3) 1–գ, 2–ա, 3–է, 4–զ, 5–ե, 6–դ
4) 1–զ, 2–գ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ

58 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին։**

1. արդյունաբերական ձեռնարկություններին զգալի ինքնուրույնություն տալը
2. գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
3. շուկայական հարաբերությունների հիման վրա երկրի տնտեսության աշխուժացումը և զարգացումը
4. մանր և միջին բոլոր ձեռնարկությունների ազգայնացումը
5. արտաքին առևտրի մենաշնորհից հրաժարումը
6. պարենմասնատրման փոխարեն պարենհարկի կիրառումը
7. վարձու աշխատանքի կիրառումից հրաժարումը

59 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ։**

1. Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում։
2. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. հոկտեմբերին ստեղծված համազգային նոր մարմինը կոչվում էր Ազգային պատվիրակություն։
3. Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնի անվանումն էր Կովկասի փոխարքա։
4. Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկող և 1828 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ։
5. Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից կազմված և սուլթան Համիդ II–ին հանձնված նախագիծը ստացել էր «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը։
6. Ցարական Ռուսաստանի կողմից Անդրկովկասում ստեղծված և Շամախի կենտրոնով վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ։
7. Հայկական պետականության վերականգնման այն նախագիծը, ըստ որի Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր խորհրդարանական հանրապետություն, հայտնի է «Հյուսիսային ծրագիր» անունով։

60 **Գտե՛ք ճիշտ պատասխանները։**

Դվինի 506 և 554 թթ. ժողովների որոշումների արդյունքում՝

1. պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը Վրաց եկեղեցու ոտնձգություններից
2. Աղուենի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
3. պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը ասորի եկեղեցու ոտնձգություններից
4. դատապարտվեցին նեստորականների գործողությունները
5. Աշտիշատի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
6. պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը Բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից
7. Նիկեայի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց

61 **Տրված իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ։**

1. Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր Միջագետքի տափաստաններում անհաջող ռազմական գործողություններ վարելու հանգամանքով։
2. Արտավազդ II–ը օգնական զորքեր չուղարկեց Կրասոսին, քանի որ Օրոդես II–ի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա։
3. Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու համար Արտավազդ II–ը Ք. ա. 34 թ. որոշեց բանակցել Անտոնիոսի հետ։
4. Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի։
5. Արտաշատի գրավման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները։
6. Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում։
7. Երվանդ Սակավակյացը, նպաստելով Ասորեստանի կործանմանը, իր դաշնակից Բաբելոնի և Մարաստանի համաձայնությամբ ընդարձակեց թագավորության սահմանները՝ ներառելով Օսրոյենեն և Միգդոնիան։
8. Տիգրան Կրտսերն ընդվզել էր Պոմպեոսի դեմ և վիրավորել նրա արժանապատվությունը, ուստի Պոմպեոսի կարգադրությամբ ձերբակալվեց և ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ։

62 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել հայ–մոնղոլական դաշինքի կնքման հետ կապված բանակցությունների օրակարգում:**

1. Մոնղոլները պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
2. Հայերի բարեկամությունը շահելու համար մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:
3. Մոնղոլները խոստացան հոգալ հայոց բանակի պահպանման ծախսերը:
4. Հայերը պարտավորվեցին օգնության խնդրանքով չդիմել Արևմուտքի քրիստոնյաներին:
5. Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
6. Երկու կողմերը պարտավորվում էին պահպանել չեզոքություն երրորդ երկրների հարձակման դեպքում:
7. Մոնղոլները պարտավորվեցին Կիլիկյան Հայաստանին միացնել Ասորիքի մի մասը:

63 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. Խորհրդային Հայաստանին Առաջին հանրապետությունից փոխանցվել էր հարևան չորս երկրների հետ տարածքային–սահմանային չլուծված խնդիրների «ժառանգությունը»:
2. Խորհրդային Միությանը բնորոշ էին իրական ժողովրդավարությունը, ազգերի ու հասարակության միլիոնավոր անդամների իրական հավասարությունը:
3. Մոսկվայի 1921 թ. ռուս–թուրքական պայմանագրի՝ հայ–թուրքական սահմանին վերաբերող դրույթները օրինական չէին, որովհետև Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան առանց հայկական կողմի մասնակցության վճռեցին հայկական տարածքների հարցը:
4. Վերակառուցման շրջանում Խորհրդային Միությունում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի և խուսանավելու քաղաքականություն:
5. Այլախոհները 1970–ական թթ. կեսերին են Հայաստանում ստեղծել իրենց առաջին կազմակերպությունները:
6. Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը 1920–ական թթ. սկզբին շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի, ապա՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, և Հայաստանի առաջին հանրապետության՝ իր գոյությունը շարունակող պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:
7. 1950–1982 թթ. ավելի շատ հայ է հայրենադարձվել Խորհրդային Հայաստան, քան Մեծ հայրենադարձության տարիներին:

64 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները:**

1. Մոսկովյան ծրագրով նախատեսվում էր կազմակերպել 25–հազարանոց բանակ, որի մի մասը՝ 10 հազարը, Հյուսիսային Կովկասից պետք է մտներ Վրաստան:
2. Պարսկաստանից Ռուսաստան վերադառնալու ժամանակ Իսրայել Օրուն է միացել Մելիք Սաֆրազը:
3. Իսրայել Օրին տեղափոխվել է Գերմանիա, հաստատվել Պֆալց երկրամասի կենտրոն Դյուսելդորֆ քաղաքում:
4. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունում Իսրայել Օրուն խորհուրդ են տվել դադարեցնել բանակցությունները եվրոպական երկրների հետ:
5. Ռազմական օգնության դիմաց հայ մելիքները խոստացել են Հովհան Վիլհելմին ճանաչել Հայաստանի թագավոր:
6. Հովհաննես Թութունջին 1666 թ. ժամանել է Փարիզ և հավաստիացրել ֆրանսիական արքունիքին, որ հայերը հույների հետ միասին պատրաստ են ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ:
7. Մահտեսի Շահմուրատը ճանապարհորդել է Եթովպիա՝ այդ երկիրը ևս հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկելու նպատակով:

65 **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1. Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
2. հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը
3. Տարոն գավառում հայ ազնվականի՝ Կորբուլոնին սպանելու փորձը
4. փոքրաթիվ զորաջոկատով Տրդատի հեռանալը Ատրպատական եղբոր՝ Բակուրի մոտ
5. Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
6. Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
7. Ներոն կայսեր կողմից իր պայմանի հայտնելը Վաղարշ I-ին՝ Տրդատի Հռոմ մեկնելու և թագն իրենից ստանալու մասին
8. Մծբինում հռոմեա-պարթևական զինադադարի կնքումը և Կորբուլոնի զորամասի դուրս գալը Տիգրանակերտից

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Անդրկովկասյան կառավարության կողմից Կարսն առանց կռվի թուրքերին հանձնելը
2. Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
3. Երզնկայի զինադադարի կնքումը Կովկասյան ճակատում
4. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը
5. Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը
6. Անդրկովկասի Սեյմի կողմից երկրամասը ռազմական դրության մեջ հայտարարելը
7. Սարդարապատի ճակատամարտը և հայոց զորքի փառահեղ հաղթանակը

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Ավարայրի ճակատամարտը
2. Գյուտ կաթողիկոսի բարձրանալը Հայոց կաթողիկոսական աթոռին
3. Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսի նահատակվելը
4. Սահակ Պարթևի վախճանվելը
5. Խոսրով IV–ի մահը
6. Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի նշանակվելը մեծ դատավոր
7. «Հավատո հանգանակ»–ի սահմանումը առաջին տիեզերական ժողովի կողմից

68 **Ստեղծագործությունը համապատասխանեցրե՛ք հեղինակի անվանը։**

Ա. Սարգիս Մուրադյան
Բ. Յուրի Պետրոսյան
Գ. Փարավոն Միրզոյան
Դ. Սոնիա Պալասանյան
Ե. Էդգար Հովհաննիսյան
Զ. Նորայր Կարգանյան
Է. Գևորգ Գևորգյան

1. «Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով» գեղանկար
2. «Գողգոթա» սիմֆոնիկ պոեմ
3. «Անվերնագիր» գեղանկար
4. «Ծովակալ Իսակով» արձան
5. «Հովհաննես Այվազովսկի» արձան
6. «Զաջուռ» կտավ
7. «Հովհաննես Բաղրամյան» արձան
8. «Զարթոնք» գեղանկար

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Ա. Սասուն–Խութ գավառում VIII դ. կեսի ապստամբության ղեկավարը
Բ. Անիի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետը
Գ. Սկևռայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը
Դ. Բագրատունիների արքունիքը Կարս տեղափոխած արքան
Ե. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը
Զ. Հռոմկլայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը
Է. Գոշավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը

1. Սարգիս Պիծակ
2. Հովհան
3. Աբաս
4. Մանուել
5. Տրդատ
6. Պողոս
7. Գրիգոր Մլիճեցի
8. Թորոս Ռոսլին

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Հայոց մեծ թվականի սկիզբը։
2. Արգիշտի I-ի օրոք համահայկական առաջին թագավորությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը։
3. Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում։
4. Հայկական ավանդության համաձայն՝ Արամայիսի անունով են կոչվել Արմավիր քաղաքը և Արագած լեռը։
5. Աստվածաշնչի համաձայն՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Քամից և Սեմից։
6. Ըստ վրացական ավանդության՝ Թորգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, Քարթլոսից՝ վրացիները, մյուս վեց որդիներից՝ կովկասյան այլ ժողովուրդներ։